Բաց-դաս ինֆորմատիկա առարկայից

# Թեմա «Անվտանգ համացանց»

/դասը անցկացվել է դպրոցի աշակերտական խորհրդի հետ/

Ս/թ փետրվարի 26-ին Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոցի դպրոցական խորհրդի աշակերտների հետ անցկացվեց բաց-դաս «Ապահով համացանց» վերնագրով: Դասին ներկա էին դպրոցի փոխտնօրեն Ս. Գրիգորյանը: Դպրոցի ինֆորմատիկայի ուսուցչուհի Մարիաննա Թովմասյանը ներկայացրեց դասի թեման և նպատակները: Աշակերտները կպչուն թղթերի վրա բառերով կամ կարճ արտահայտությամբ պատասխանեցին «Համացանցը որպես ինչ է ծառայում իրենց համար» հարցին և փակցրեցին նախօրոք պատրաստված և երեք՝ դրական, բացասական և չեզոք, բաժանումներ ունեցող պաստառին: Յուրաքանչյուր թերթիկ ընթերցվեց և ուսուցչի օգնությամբ պարզաբանվեց (հիմնավորվեց) թերթիկի փաքցնելու տեղը՝ կախված թերթիկների վրա ներկայացրած գործողության՝ տվյալ գործողությունը անվտանգ է, դրական հատկանիշ է, թե իր մեջ վտանգ է պարունակում և պատկանում բացասական հատկանիշին:

Նախքան հանձնարարությունը աշակերտներին ներկայացվեց «Անվտանգ համացանց» դասի անհրաժեշտությունը, աշակերտներն իրազեկվեցին համացանցում առկա վտանգների մասին և ինչպես համացանցը ծառայեցնել իրենց:

Գործնական աշխատանքից հետո ներկայացվեց համացանցից անվտանգ օգտվելու կանոնները: Ուսուցչի հետ միասին քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք առաջանում են տարբեր կայքերում գրանցվելիս կամ էլ անծանոթների հետ սոցիալական կայքերում շփվելիս: Սովորեցին, թե ինչպես գրագետ օգտագործեն համացանցի ռեսուրսները:

Որպես դասի ամփոփում աշակերտներին հանձնարարվեց լրացնել թեստ (նախապես պատրաստած թեստային հարցեր), որի նպատակն էր իմանալ թե աշակերտները ինչպես են կիրառում իրենց կողմից յուրացրած համացանցի անվտանգության կանոնները (թեստերը ընտրված էր safe.am կայքի թեստային հարցերից):

Բաց-դասի ժամանակ ստացան հանձնարարություն մեկ շաբաթվա ընթացքում յուրաքանչյուրը իր դասարանում՝ դասղեկի ժամին, անցկացնի իրազեկման դաս «Անվտանգ համացանց» թեմայով, որի ամփոփումն էլ կլինի իրենց դասարանի կողմից պատրաստած պաստառը:

Փոխտնօրենի օգնությամբ ինֆորմատիկայի ուսուցչուհին ամփոփեց դասը, որից հետո ցուցադրվեց թեմատիկ տեսանյութ և ներկայացվեց safe.am կայքը:

Մեկ դասաժամը բավարար չէր կայքը լիարժեք ուսումնասիրելու համար: Ներկաները (աշակերտներն ու ուսուցիչները) կայքի մնացած բաժինները խոստացան ուսումնասիրել դասից դուրս: